ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾԱԿՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հեռ. (0262) 6-12-09
№ 29-Ե.
27. 02. 2017թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐՆ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Կից ուղարկում ենք Ծակքարի համայնքի ավագանու թիվ 2 նիստի նո. 9-11 որոշումները :

Ծակքարի համայնքի ղեկավար՝ Գ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾԱԿՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

15.02.2017 թ.

Հեռ. (0262) 6-12-09 գ. Ծակքար

ՈՐՈՇՈՒՄ - 9

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով

փոփոխություն կատարել համայնքի ավագանու 2016 թ. դեկտեմբերի 12-ի N 13 նիստի N 41 որոշման մեջ և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար սահմանել տեղական տուրք հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ. ընդ. մակերես ունեցող և հասարակական ու արտադրական նշանակություն ունեցող օբյեկտների համար՝ - 4.500 դրամ,

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-500քմ. ընհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 10.000 դրամ,

բբ) 501- 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 15.000 դրամ

բգ) 1001-3000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 15.000 դրամ

բդ) 3000 – ից ավել քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 30.000 դրամ

Ոչ հիմնական շինություններ տեղադրելու համար՝

գ) մինչև 20 քմ. ընհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 1,000 դրամ,

դ) 20 և ավել քմ. ընհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 1.500 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական, այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման աշխատանքների համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1,000 դրամ,

բ) Բացի օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում է նաև սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմեր.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թուլտվության համար՝ 1,500 դրամ,

4. ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1,000 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3,010 դրամ,

գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3,905 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6,005 դրամ,
ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7,505 դրամ,
զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 16,505 դրամ:

5. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1,000 դրամ,
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3,005 դրամ,
գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3,905 դրամ,
դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6,005 դրամ,
ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7,505 դրամ,
զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13,505 դրամ:

6. Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 120 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30, 000 դրամ.
գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 7,500 դրամ.
գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման եւ իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1,000 դրամ,
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.505 դրամ,
գ. 500-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3,005 դրամ,
դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.005 դրամ,
ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7.505 դրամ,
զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.005 դրամ,
Ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 100 դրամ՝
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 305 դրամ,
գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 605 դրամ,
դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.205 դրամ,
ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.405 դրամ,
Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

կողմ-6 դեմ-0 ձեռնպահ-0

Միհ. Հակոբյան
Հ. Այվազյան
Մ. Ալեքսանյան
Մեխ. Հակոբյան
Ա. Խաչատրյան
Զ. Հովհաննիսյան

ՈՐՈՇՈՒՄ - 10

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և ՀՀ «Հողային օրենսգրքի» 48-րդ և 81-րդ հոդվածի 3-րդ կետով տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը համայնքի սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ գյուղ. նշանակության վարելահողը և բնակավայրի հաս. կառուցապատման հողը մրցույթային կարգով 25-տարի ժամկետով տալ վարձակալության

1. ծածկագիր 05-045-0202-0013, չափը 0.3 հա., գյուղ., վարելահող, վկայական N 18012017-05-0034 սահմանել տարեկան վարձավճար 9.000 դրամ մեկ հեկտարի համար:
2. ծածկագիր 05-045-0103-0047, չափը 0.4302 հա., բնակ., հաս. կառ. հողամաս, վկայական N 13092016-05-0023 սահմանել տարեկան վարձավճար 110.000 դրամ մեկ հեկտարի համար:

Ավագանու կողմ-6, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:

Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

կողմ-6 դեմ-0 ձեռնպահ-0

Միհ. Հակոբյան
Հ. Այվազյան
Մ. Ալեքսանյան
Մեխ. Հակոբյան
Ա. Խաչատրյան
Զ. Հովհաննիսյան

ՈՐՈՇՈՒՄ - 11

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի և <Սոցիալական աջակցության մասին> օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի համայնքապետարանի սոց. ոլորտից տալ դրամական օգնություն:

Նուշերվան Անուշավանի Մանուկյանին	- 30.000 դրամ
Գևորգ Արթուրի Համբարձումյանին	- 55.000 դրամ
Դերենիկ Ավետիքի Բաղդասարյանին	- 30.000 դրամ
Թևոս Ջիվանի Սահակյանին	- 30.000 դրամ
Էդուարդ Ավետիքի Հակոբյանին	- 65.000 դրամ
Օֆիկ Մխիթարի Մխիթարյանին	- 30.000 դրամ
Անուշ Իշխանի Հակոբյանին	- 30.000 դրամ
Ռեբսի Հակոբի Ղազարյանին	- 30.000 դրամ

Ավագանու կողմ-6, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:

Որոշման պահանջի կատարումը վերապահել առաջատար մասնագետ Տ. Աթոյանին:

Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

կողմ-6 դեմ-0 ձեռնպահ-0

Միհ. Հակոբյան

Հ. Այվազյան
Մ. Ալեքսանյան
Մեխ. Հակոբյան
Ա. Խաչատրյան
Զ. Հովհաննիսյան

Ծակքար համայնքի ղեկավար՝ Գ. Ավետիսյան
Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Խաչատրյան